ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2025թ. թիվ 465-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԹԻՎ 454-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, հաշվի առնելով «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի 14.08.2025թ. դիմումը և կից փաստաթղթերը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի օգոստոսի 12-ի ««Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության անվանակոչության և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 189-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 454-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Որոշման 1-ին և 2-րդ կետերում, ինչպես նաև որոշմամբ հաստատվող կանոնադրության փոփոխության մեջ «Հարութիւն եւ Սուզան Մանկօեանների» բառերը փոխարինել «Հարություն և Սյուզան Մանգոյանների» բառերով:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը՝ նոր խմբագրությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Ստորագրող
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
3905890216

2025-08-15 15:46:21 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 14
ք.Վանաձոր